

# ՀՕՄ-ի Գանատայի շրջանի 2013 տարեշրջանի սեմինարը

ՀՕՄ-ի Գանատայի շրջանի տարեկան սեմինարը տեղի ունեցավ Ապրիլ 12- 14 շաբաթավերջին, Համիլթոնի մէջ, հիւրընկալութեամբ 100-ամեայ «Արև» մասնաճիւղին: Սեմինարին իրենց մասնակցութիւնը բերին 160 անդամներ եւ համակիրներ, ժամանած Գանատայի տարբեր մասնաճիւղերէն:

Նիակարայի ջրվէժները պտոյտէ մը ետք, սեմինարին պաշտօնական բացումը կատարուեցաւ Շաբաթ, 13 Ապրիլին, առաւօտեան ժամը 10:00-ին, ՀՕՄ-ի քայլերգի երգեցողութեամբ: Բացման խօսքը կատարեց Շրջանային վարչութեան ատենապետ ընկՏ. Աննա Պուլկարեան: Ան անդրադարձաւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական կոնդակին, որ 2013-ը կը հռչակէ Հայ մօր տարի եւ առիթը կ'ընծայէ խորհրդածուրոյ հայ մօր ստանձնած կենսական պարտականութեանց մասին՝ ընտանիքէն եւ հասարակական կեանքէն ներս: ԸնկՏ. Պուլկարեան յիշեցուց ներկաներուն թէ ՀՕՄ-ը իր շուրջ կը համախմբէ իր անդամները մէկ ընտանիքի նման, հետեւաբար որպէս ՀՕՄ-ուհիներ պէտք է հպարտ զգանք այս բարեսիրական միութեան պատկանելով: Ապա, իր սրտի խօսքը փոխանցեց ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան փոխ-ատենապետ ընկՏ. Նայիրի Շահինեան: Ան բարձր արժեւորեց ՀՕՄ-ի Գանատայի շրջանի օրինակելի գործունէութիւնն ու մասնակցութիւնը Կեդրոնական վարչութեան բոլոր ծրագիրներուն, ու շնորհատրեց եւ յանձնարարութիւն մաղթեց այս տարուան Գանատայի շրջանի նորագիր 60-է աւելի անդամներուն, որոնք պիտի խտացնեն ՀՕՄ-ի շարքերը:

Շրջանային վարչութեան անդամ ընկՏ. Յասմիկ Բարսեան ներկայացուց սեմինարին առաջին դասախօսքը՝ պրն. Պարետ Մարոնեան: Պրն. Մարոնեան վաւերացրեց ֆիլմ պատրաստող է: Ան չորս անգամ չհաճ է Emmy մրցանակը եւ աշխատակցած ամերիկեան PBS պատկերասփիւռի ցանցի դանազան վաւերացրեց ֆիլմերու արտադրութեանց: Հինգ տարի առաջ հիմնած է Armenoid Team խմբակը, որ կ'արտադրէ հայկական թեմաներով վաւերացրեց ֆիլմեր: Ցարդ արտադրած է չորս հայկական ֆիլմեր: Անոր «Ցեղասպանութեան որբերը» (Orphans of the Genocide) ֆիլմին 7 վայրկեաննոց յաւաւումը (trailer) թեկնածու էր պատմա-

կան վաւերացրեց ֆիլմերու Emmy մրցանակին եւ Telly մրցանակի յաղթականը: Այժմ Armenoid Team-ը կ'աշխատի սոյն վաւերացրեց ֆիլմերու շարժապատկերի: Ներկաները յուզումով գիտեցին մէկ ու կէս ժամուան տեւողութեամբ այս իւրայատուկ ժապաւէնը: Յաճախ արժարժուած ցեղասպանութեան նիւթը, այստեղ ներկայացուցաւ իրողպէս, հիմնուելով փաստաթուղթերու, պատկերներու, ժապաւէններու, վկայութիւններու եւ գիրքերու վրայ, յայտնաբերելով կարգ մը պատմական նոր եղբուրներ: Ցուցադրութեան աւարտին, ներկաները իրենց քաջակերանքը արտայայտեցին հինգ վայրկեան տեւողութեամբ յոտնկայս ծափող յոյններով: Ապա, տեղի ունեցաւ հարց պատասխան, որու ընթացքին պրն. Մարոնեան ընդգծեց նիւթական ապահովելու անհրաժեշտութիւնը՝ հայկական ցեղասպանութեան արխիւները իւրացնելու համար: Ան ըսաւ թէ 18 Ապրիլին, այս ժապաւէնը պիտի սփռուի ԱՄՆ-ի Fresno PBS պատկերասփիւռի ցանցէն: Armenoid խմբակը կը մտադրէ նուիրել այս վաւերացրեց ֆիլմին օրինակներ աշխարհի տարածքին գտնուող բոլոր գրադարաններուն: Անոր յաջորդ ծրագիրն է պատրաստել նոր վաւերացրեց ֆիլմ ժապաւէն մը «Women of 1915» խորագրով: Շրջանային վարչութեան անուամբ, ընկՏ. Աննա Պուլկարեան շնորհաւորական խօսք ուղղեց պրն. Մարոնեան: Ան ի գնահատանք իր գործի յանձնարարութեան եւ նպաստելու անոր ապագայի ծրագիրներու իրագործման, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը Պարետ Մարոնեանին նուիրեց 5000 \$:

Շրջանային վարչութեան անդամ ընկՏ. Իրեն Թիլմի ներկայացուց երկրորդ դասախօսքը՝ տիկ. Անիթա Արզումանեան: Տիկ. Արզումանեան մասնագիտացած է գեղագործութեան ճիւղին մէջ: Ան վկայուած է Թորոնթոյի համալսարանէն՝ ստանալով Bachelor of Sciences and Bachelor of Pharmacy տիտղոսը: Աշխատած է որպէս գեղագործ, ապա դարձած սեփականատէրը Միսիսսոկայի Shopper's Drug Mart գեղարանին: Տասնըվեց տարիներ շարունակ եղած է մասնագէտ խորհրդատու վերոյիշեալ հաստատութեան եւ հակած անոնց ծրագիրներուն: Այժմ, ան քննիչն ու ներկայացուցիչն է Օնթարիոյի գեղագործներու գոյլճիւղի ( Pharmacy Inspector/ Field Representative): Տիկ. Ար-



զումանեան խօսեցաւ «Լաւ եւ առողջ ծերանալ»-ու գաղտնիքներուն մասին: Մարմինը վնասներէ պաշտպանելու եւ զայն խնամելու համար, յորդորեց որդեգրել կենցաղային կարգ մը սովորութիւններ, ինչպէս՝ հաւասարակշռուած անդակնոն, մարմնական եւ մտային մարզանք, եւ խօսեցաւ հոգեկան տագնապներու ընթացքին ինքնակառավարման անհրաժեշտութեան մասին: Անդրադարձաւ նաեւ կարգ մը բժշկական քննութիւններու կարեւորութեան մասին, թաքուն հիւանդութիւններ յայտնաբերելու համար:

Շրջանային վարչութեան անդամ ընկՏ. Անմէլ Պետրոսեան ներկայացուց երրորդ դասախօսքը՝ տիկ. Գարլա Մարիա Խանճեան, սեփականատէր La Peau մորթի խնամքի հաստատութեան: Տիկ. Խանճեան իր բարձրագոյն ուսումը ստացած է Պէյրութի Ամերիկեան համալսարանէն, ստանալով մագիստրոսի վկայական Economics ճիւղին մէջ: Ան իր կամաւոր ներդրումը բերած է ՀՕՄ-ի եւ ՀՄԸՄ-ի շարքերէն ներս: Մեծ փորձառութիւն ձեռք բերած է Գանատայի, Հիւսիսային Ամերիկայի, Եւրոպայի, Ասիոյ եւ Միջին Արեւելքի մէջ, տնտեսագիտութեան, առեւտրական եւ խորհրդատուական մարզերէն ներս: 2007-ին ան պատուուած է որպէս “Entrepreneur of the Year”, Ernst and Young ընկերութեան կողմէ: Իր քրոջ Իրմայի հետ, այսօր անոնք արժանաւոր սեփականատէ-

րերն են Ժրնելի մէջ Be Futur Suisse մորթի ըջիջներու հետազոտութեան հաստատութեան: Տիկ. Խանճեան ներկայացուց իր հաստատութեան արտադրած կրեմի մորթի երեք սերերը: Ան ըսաւ թէ՛ գեղեցկագիտութեան աշխարհին մէջ, La Peau մորթի խնամքի սերերը առաջնակարգ գիրքի վրայ կը գտնուին, շնորհիւ իրենց ուրոյն յատկութիւններուն: Անոնք օգտակար կը հանդիսանան կնճիռներու ու սպիւններու զարմանումին եւ կը նպաստեն առողջ մորթ ունենալու:

Սեմինարի ծրագրին վերջին հանգրուանը եղաւ Zumba-ն, Գէմպրիճի «Արև» մասնաճիւղի զուգայի դասատու ընկՏ. Սօսի Փօլատեան-Ասատուրեանի գլխաւորութեամբ: Ներկաները ամբողջ օրը նստած մնալէ ետք, խանդավառութեամբ մասնակցեցան այս մարզանքին:

Սեմինարի աւարտին տեղի ունեցաւ արժեքաւոր նուէրներու վիճակահանութիւն, նուիրուած՝ ընկերուհիներ՝ Յասմիկ Բարսեանի, Գարա Յակոբեանի եւ տիկ. Խանճեանի կողմէ: Ներկաները բարձր գնահատեցին սեմինարի նիւթերու բախնդիր ընտրութիւնը եւ առաջարկեցին կազմակերպել այլ սեմինարներ, առիթ ընծայելու միջ-գաղութային յարաբերութեանց: Երեկոյեան, ընկերուհիները ներկայ գտնուեցան Համիլթոնի «Արև» մասնաճիւղի 100-ամեակի տօնակատարութեան: